ժիշտների կերպարևեր: Այս շրջանում դիմանկարչության վարպետն իր առջև խնդիր է դնում բազմակողմանիորնեն և լրիմ կերպարվ լուծել դիմանությունը: Սարյանը չի սահմանափակվում մարդու միայն արտաքին ֆիզիկական նմանության վերաբարձրմամբ: «Ամեն մի դիմանկարի մեջ, — գրում է նա, — որը նկարում եմ, ես ցանկանում եմ, ամենից առաջ, վերաբարձրել ոչ միայն արտաքին նմանությունը, այլև ավագալ մարդու ներքին կերպարը»: Զգուելով վերաբարձրի ավագալ մարդու ներքին կերպարը նկարիչը, բնականաբար, հակվում է դեպի նրան հատում, բնորոշ զժերի և անհատականության վերաբարձրությունը: Մ. Սարյանը նմանության պրոբլեմը դիմում է մարդու արտաքին-ֆիզիկական և ներքին-հոգեկան կերպարի դիմանկարիկան միանության մեջ: Նկարիչն առաջնորդվում է այս մտքով, թե ամեն դիմանկարի հիմնական և իսկական արժանիքը, այնուամենայնիվ, բնականի հետ ունեցած նմանությունները: Սակայն առաջնորդությունը պարագաների վերաբարձրը, ինչ բնույթի էր որ ինիք, մարդու հասարակական պարագն է և բնորոշում է նրա հասարակական դիմքը: Այդ պատճենում սովորական մարդու անհատականությունը սկսուորնեն կապվում է նրա հասարակական դիմքի հետ և հանդիս են դալիս միասնաբար: Դրանով իսկ Սարյանի լավագույն դիմանկարները մարդու անհատականության հետ մեկտեղ ցույց են տացին նաև նրա հասարակական դիմանկարը: Այս թե ինչու Սարյանի լավագույն դիմանկարները հասարակական խոշոր նշանակություն ունեն: Նրանք, միաժամանակ, բնութագրում են դարաշրջանը:

1930-ական թվականներին Սարյանի առաջնորդությունը դիմանկարները միաւնագուար արժենք չունեն: Նրանք բազմազան են ոչ միայն իրենց արվածով, այլև հնդիբնակի մոտեցմամբ, կերպարի մեկնարանման սկզբունքներով և գունանկարչության մեջ տիպականության պրոբլեմի լուրովի լուծմամբ: Այս շրջանի նրա դիմանկարչության արվեստի դարգացումն ընթանում է խարակունեալին կերպարներ սանդօնքություններում: Ավելի վաղ սահմանական դիմանկարներում, ինչպես օրինակ՝ նկարիչ Մ. Սարյանի (1930), Հարտարապետներ Ա. Բամանյանի և Բ. Թորամանյանի դիմանկարներում (1934) նկարիչը վերաբարձրել է նրանց անհատակա-



Elie Nadelman. *Portrait of Georges Braque*, 1917

Առաջունը, ձգտելով վեր հանել և ընդդեկ նրանց առավել քնորոշ և հաս-  
կանշական կողմերը: Հետագայում, 1939—1940 թվականներին ստեղծած  
դիմանկարներում նաև հանդիս է զալիս ավելի զուրափ, ավելի խոր թա-  
փանցելով անձնագորության ներքնաշխարհը: Այդ տեսակեալից հատկա-  
նշական է դունագեղ, չայն և համարձակ վրձնահարվածներով նկարված  
ՍՍԻՄ ժողովրդական արտիստ Ռուբեն Միմոնովի դիմանկարը (1939):  
Արտիստը պատեհերված է բազմոցի մեջ նստած դիրքով, սևնուն, կենտ-  
րոնացած հայացքով: Նկարիչը դիտողի ուշադրությունը կենտրոնացնում  
է բազմոցի ծաղկազարդ հենակի փոնի վրա նկարված արտիստի դիմքին,  
որը կենդանացված է առանձնապես նրա աչքերի խելացի արտահայտու-  
թյամբ: Վերաբարձրելով մարդու ինտելեկտուում հատկությունը՝ Սարյանն  
իր ինքնատիպ դիմանկարչական լնդվով որոշակի ու հատուկորեն արտա-  
հայտում է հիմնականը մարդու մեջ՝ նրա ստեղծագործական անհատա-  
կանությունը: Բանաստեղծ Ավ. Խաչատրյանի դիմանկարում (1940) ա-  
ռաջին իսկ հայացքից բացահայտվում է պատեհերի հիմնական բովան-  
դակությունը՝ պետի խոր ստեղծագործական կերպարը: Ավ. Խաչակյա-  
նը նստած է պատուհանի մոտ, զրասեղանի առաջ: Աշ ձեռքը զրել է  
դրերով լցված սեղանի վրա և հանդիսատ ու մտախոն նայում է դիտու-  
ղին: Նրա զեմքը, որ տրված է երեք բառորդ թերությամբ, ինչպես և նրա  
մարմինն ու շրջապատի առարկաները նկարված են նյութականությամբ  
և ծավալային: Այդ դիմանկարուում պատկերված պատուհանից, հեռ-  
մում, երեսում է բնության մի փոքրիկ զողորիկ տեսարան՝ ծաղկած ծա-  
ռերով: Պատկերի աջ կողմի վերեկ անկյունում է հայկական լնինացին դիտածի մի նկար, որը ներկայացնում է հայկական լնինացին դիտածի մի տեսա-  
րան՝ դիտավիճ կանգնած մի եղչերուի պատկերով: Այդ ակնեսուարները  
զրասեղանի վրայի զբքերը, պատուհանից երեսացող հայկական պեյզաժը  
և պատից կախված նկարի բովանդակությունը, սերտորեն կապվում են  
մեծ բանաստեղծի կերպարի հետ, լրացնում և կոնկրետացնում են դի-  
մանկարի բռվանդակությունը: Անվանի բանաստեղծին նկարիչը պատկե-  
րել է մտախոն, դիտողին հանգիստ նայելիս: Քա մոնումենտաց ձևի զի-  
մանկար է, մի պատկեր, որտեղ հրաշալի և բազմակողմանիորեն ցույց է  
արված ստեղծագործ մարդու ուժեղ անհատականությունը:

Մարդու անհատականության և նրա ախտականի բացահայտումը,  
որը կազմում է Սարյանի դիմանկարչության հիմնական զիմը, լուրովի



Նախքի Զարյան, 1940

լուծում է զտել բանաստեղծ Ա. Զարյանի, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ և Խանութիւնի և Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Կ. Մարշալի պիմանկարներում:

Նախքի Զարյանի պիմանկարը պլեներային աշխատանք է: Այսուհետ բանաստեղծի գիմքը նկարված է նորակառուցյա քաղաքի պեյզաժի ֆոնի վրա՝ կեսօրվա արեի պայծառ լուսի տակ: Բանաստեղծը նստել է աթառին, մարմնով քիչ առաջ թեքված և աշխատված և պիմացը՝ պիտողին: Դաստեղծում է անմիջական կապ պիտողի և պատկերվողի միջև: Այսուհետ ինչպես և մյուս պիմանկարներում, նկարիչը նիշտ է մոտենում թեմայի մշակմանը, որը նպաստում է նրան՝ ճիշտ գնահատելու նոր, սովորական ստեղծագործ մարդուն:

Արգշտինի Հ. Պանիկյանի զիմանկարում զերիշխում է պարզությունը և ինտիմությունը: Անվանի երջության կեցվածքը միանգամայն ընական է: Գլուխ անբռնազրա զիրքը, զիտողին ուղղված հայտցը և զուսա ժայռացը միաբարձրության վրանի, դեղին, կապույտ և շագանակագույն նրանցիների նորք ներդաշնակության հետ զիմանկարին տալիս են արտահայտչականություն և երաժշտական տրամադրություն: Դիմանկարը հազեցված է անմիջական կենացաստատությամբ:

Պատկերված մարդուն հասկանալու, ճիշտ զնաւասելու և մերարտագիր խնդրում կարևոր նշանակություն ունի Սարյանի միանգամայն ինքնաւախ աշխատանքի մեթոդը: Մարդուն նկարելիս Սարյանը զույգում է նրա հետ առավել հետաքրքրող ու հույսող հարցերի շրջը և միաժամանակ նկարում: Ենս ձգում եմ ստիպել նրան, — զրում է Սարյանը, — մոռանալ այն մասին, որ ինքը դիրք է ընդունել, ևս զրուցում եմ նրա հետ, ներգրավում եմ նրան մտակե և հույսող թիմաների շրջը և միայն այն կարճառն պահին, երբ նկատում եմ, որ մարդը վառված է սանհծագործական մարկրով, ևս շտապում եմ նկարել նրան: Մնացած ամբողջ աշխատանքը ինձ համար ունենում է արգելն անինիկական բնույթ և ես մասառոգում եմ միայն այն բանով, որ զիմանկարի մշակումը և մանրամասնությունների նկարումը շիտեղին իմ ընկալած տպագործությունները:

Մանզագործական աշխատանքի այլ մեթոդը օգնում է նկարչին՝ Համապատասխան մոտեցում ունենալ կյանքում իրենց ընավորությամբ և խառնվածքով առարկել մարդկանց նկատմամբ: Պա, ընականաբար, նկատում է առարենը ընավորությունների ճիշտ վերաբռնագրմանը և բազմազան կերպարների առաջնայինը: Սարյանի զիմանկարները հնու են կերպարների միարինությունից: Նրա զիմանկարների շրջանակները, ինչպես կյանքում՝ պատահանից, մեզ են նայում մեր ժամանակի առաջավոր մարդիկ՝ սովորական կուլտուրայի ականազոր դորձիչներն իրենց անհատականությամբ, ներքին մեծ ուժով և ինտենսիվառավելությունուն: Նրա զիմանկարները, կենսությանությունը և լավատես զգացմունքներով: Նրա զիմանկարները համակված են ուր, սովորական մարդու նկատմամբ տաճած

\* М. Сарьян. Автобиографические сведения, стр. 16.



Տառամադրութեան Սովորացուն, 1940

անկնքծ ու չերմ սիրով: Հենց դա է Սարյանի 1930-ական թվականների գիտականկարների հրապումը:

Մարտիրոս Սարյանն աշխատում է նաև գրի գեղարվեստական ձեռվորաման և նկարագրագրման բնագավառում: 1920—1930-ական թվականներին նա ստեղծում է հայ և ռուս կլոստիկ զրոյների երկերի մի շարք իլլուստրացիաներ, որոնցից ուշագրավ են Հովհ. Թումանյանի «Հին օրհնություն» բանաստեղծության (1923), «Գելը» պատմվածքի, Ի. Կրիլովի «Ազուր» ու աղվեսը» առակի (1934) իլլուստրացիաները: Նկարչի զրաֆիկ արվեստի համար ավելի բնորոշ են և առավել հետաքրքրություն են ներկայացնում հայկական ժողովրդական հերիտաժների և Ֆիրզուսությունամամբ ու Զոհրաբը հերոսական կապոսի իլլուստրացիաները:

Սարյանը մի քանի տասնմայ է անդրադարձել հայկական ժողովրդական հերիտաժներին: Այդ իմաստալից, վառ և հարուստ երևակաբանման առաջնական համար համարվում է արարող և լակոնիկ գծանկարչությամբ: Համեմել թեմայի պատկերավոր լուծմանը, վեր հանել առավել կարևոր դրամատիկ ու ժեմազարդ մոմենտները՝ երրմին դրանց ավելացնելով ֆանտաստիկ կամ չի պերըրոլիկ տարրերը: Հայկական ժողովրդական հերիտաժների սարյանական նկարագրագրումները պատկերում են ունալ իրականությունը, իսկ դրանց հիպերռոլիկ տարրերը թվում են հավանական: Սարյանի դրաֆիկ արվեստի լավագույն գուանատականն է նաև այն, որ հայկական հերիտաժների ակագիմիսկան հրատարակության համար արված իլլուստրացիաները (1929), հետագայում 1932—1933 թթ. նկարած լրացուցիչ նոր իլլուստրացիաներով Մոսկվայի «Մանկական հրատարակչությունը» 1933 թ. հրատարակում է նաև պատճենի ընթերցողների համար:

Սարյանի ստեղծագործությունները առանձին տես է դրամատիկ նաև Բատերական-դեկորացիոն նկարչությունը: 1920—1930-ական թվականներին նա ստեղծում է դրամատիկ ու օպերային թատրոնների մի քանի շնմադրությունների արտաքին ձևավորման էսքիզներ: Դեռևս 1920 թվականին նոր նախօնքնանում նա նկարում է «Մանուշակ» բալետի էսքիզները՝ Ռուսովի պատրունների նկած սուսական բաքետային խմբի թիմազրության համար: Նա 1923 թվականին նկարում է ներևույթի Պ. Առնօդուկյանի անվան դրամատիկ թատրոնի բեմի մեծ վարագույրը, իսկ 1930 թվականին՝ Ալ. Ազենդիարյանի «Արմաստ» օպերայի գեղարվեստական ձևավորման էս-



Հայկանուշ Գոնիկելյան, 1940

բիզները՝ Օդեսա քաղաքի օպերային թատրոնի բնմագրության Համար։ Հետագայում (1935) Սարյանը նկարում է զեկորացիաների ու հագուստների էսքիզներ կոմպոզիտոր Հ. Ստեփանյանի «Եաչ Նազար» օպերային, Կ. Գոցցիի «Պրինցիսսա Տուրանցուու» պիեսի բնմագրությունների (1935), ինչպես նաև էսքիզներ՝ Կ. Ստանիսլավսկու անվան Մոսկվայի օպերային թատրոնի բնմագրած Ռիմսկի-Կորսակովի «Ռոկն արագադ» օպերային նրկորոդ գործողության Համար։

Սակայն Սարյանի թատերական-գեկորացիոն արվեստի չափագույն ստեղծագործությունը, նրա զլուխ գործոցը, կոմպոզիտոր Ալ. Ապենդիչյանը սկզբանու օպերայի գեղարվեստական ձևավորումն է, որը Մոսկվայում 1939 թ. տեղի ունեցած Հայկական արվեստի տասնօրդակին Հակայական Հաշողություն ունեցավ։ Այդ ձևավորությունը լայն ժողովրդականությունն առ 1941 թ. արժանացավ Մտալինյան մրցանակի։



Աղ. Սովորովի աշխատանք «Աշմասա» ուղերայի բնմակրսության ձևափորումը:  
Առաջին գործողության տեսարանը (Էսքիզ), 1929

Խորապես ուղղված ամսաթիվ պատմական անցյալի և այն դարաշրջանի  
կյանքը, որը ներկայացվում է սպերայում, հիմնայի զգալով բնմը՝  
Սարցանն առաջնամբ է Հովհ. Թումանյանի պոեմին և Աղ. Սովորովարյանի  
երաժշտությանը համապատասխան պեկորացիաներ, որոնք ընդուն եր-  
պատում են օպերայի բովանդակության հստակ զանազան մեջ՝  
մասսով օպերայի բնմադրության զննարկեալուական ձևափորման մեջ՝  
տեղ է հատկացվում հացկական ճարտարապետությանը: Հարսարապետ  
ն. Տոկարսկու մասնակցությամբ նկարիչը բնմի վրա կառուցման է մանու-  
ժենտալ ճարտարապետության հայտնապ անսամբլներ և առաջնամբ հայ-  
կական բանդուկագործական մոտիվներով հաղեցված պեկորներ, որոնք  
իրենց զննարկեալուականությամբ և բնմականությամբ հարավորություն  
են տալիս լրիվ պատկերացում անձնական միջնադարյան հայկական ճար-  
տարապետության և պեղարգիստական բարձր կույտուրայի ժաման:

Զեսվորման առանձին հատվածներ, որոնք ներկայացնում են Հա-  
յասաւանի զննարկեալ բնության տեսարանները, Սարցանը մշակել է ոհա-



Այ. Սովենգիարյանի «Ալմաստ» ռազերտյի բնմազրության ձևավարումը  
Երկրորդ զարծոպության տեսաբանը (էսքիզ), 1939

լիստական մեծ ուժով և պոետիկականությամբ։ Առանձնապես գեղեցիկ է «Ալմաստ» օպերայի երկրորդ գործողության ընդհանուր տեսաբանը։ Մեծ շաշակով ու բացառիկ գունագեղությամբ են կատարված դիրտկատարների հագուստները։ Պատմականությն ճշմարտացի և զարաշքանը ընութապող այդ հագուստները իրենց բազմազանությամբ ու գույների հարստությամբ կազմում են զյութի ներզաշնուկություններ։ Դրանց գունային դամայում կա կոլորիտի նուրբ զգացում։ Արդյանը առնդռում է ամժմանիկ հնչեղությամբ։ Հարուստ գունային զարմանաւում կատարված նրան դեկորացիաները անցնում են երկրորդ պլան, տեղի տարածություն հիմնականին՝ օպերայի զործող անձանց։ Դիզարվեստական այդ ձևավարումը օրդանապես կապվում է դրազողության հետ և նպաստում երաժշտության բավանդակության բացահայտմանը։ Վարպետությամբ կատարված և ներկայացման գեղարվեստական անսամբլի հետ

ձուլված այդ ձեւավորումը Սովորական Միության 1930-ական թվական-ների թատերական-գեկորացիոն արվեստի նշանակալից նվաճումն է:

Սարբանի այդ շրջանի ստեղծագործական աշխատանքներից ուշագրավ են նաև նրա մեծաժամակական պատմությունը: 1939 թ. Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի համար նաև նկարում է երկու պահնեն՝ «Հայաստան» և «Հայաստանի այգիները» թեմաներով, որոնք բարձր գնահատության են արժանանուում մայրաքաղաքի դիզայնուտականից հասարակության ու մամուլի կողմից: Նաև պանսոներ է նկարնել նաև անցյալում: 1937 թ. Փարփառ միջազգային ցուցահանդեսի սովորական պամփըինի համար Սարբանի նկարած «Սովորական աշխատավայր հանդիսացը» թեմայունում է մրցանակի: ցուցահանդեսի համանաժողովը նկարչին պարզեց է «Մեծ մրցանակով» և «Պատվո դիպլոմով»:

1920—1930-ական թվականներին Սարբանը սովորահայ մյուս նկարչների հետ պարբերաբար մասնակցում է Մոսկվայի ուսունական գուցադրություններին: 1936 թ. Մոսկվայում և Էնքինգրամում կազմակերպվում է Սարբան սովորական շրջանի (1918—1936) ստեղծագործությունների անհատական ցուցահանդես, որը շերմ ընդունելություն է գտնում:

Իր զեղարվեստական գործունեությանը զուգընթաց Սարբանը կատարում է նաև հասարակական-պետական աշխատանք: Նա 1929—1935 թթ. նշել է Հայաստանի Կենտղործկոմի անդամ, իսկ 1935 թ. ընտրվում է Անդրկովկասյան Կենտղործկոմի անդամ: Բարձր գնահատելով նկարչի սոհեղծագործությունները՝ Սովորական Հայաստանի կառավարությունը 1926 թ. գնուրվարի 27-ին նրան 2նորուում է ժողովրդական նկարչի ուսումնական կոչում, իսկ 1936 թ. ՍՍՌՄ Կենտղործկոմը նրան պարզեաւորում է «Կարմիր դրոշ» շքանշանով: 1939 թ. Սարբանն ստանում է նաև «Պատվո նշան» շքանշան և մեդալներ:

1941 թ. Հունիսի 22-ին սկսվում է Հայրենական Մեծ պատերազմը: Սովորական Միության Կոմունիստական պարտիան և Սովորական կառավարությունը ՍՍՌՄ ժողովարկությունների առջև խնդիր են դնում՝ երկրի ամբողջ աշխատանքը վերակառուցել ուղղմական ձևով՝ առնենին և նմանական գործությունների առջև աշխատանքը վերակառությունը կատարելու խնդիրներին: Դա վերաբերում էր նաև սովորական արվեստի



Աղջկուլ Բ. Խաչիս, 1842

աշխատողներին: Հայաստանի նկարիչների ու քանդակագործների զդացի մասը մեկնում է բանակ՝ զննքը ձևորին կռվելու արյունաբրու թշնամու դման: Թիկունցում մնացած նկարիչների ու քանդակագործների առջև ժառանում են մեծ ու ոժվարին խնդիրներ: Ամենից առաջ նրանք կոչվում են ծառայելու սազմանակատին և թիկունցին՝ պատկերելով Հայրենական ՄԵծ պատերազմի հերոսներին, ժողովրդին դաստիարակելով սովորական Հայրենականի ողով:

Հայաստանի նկարիչների հետ Սարյանը նույնպես վերակառուցում է իր ստեղծագործական աշխատանքները պատերազմի ժամանակաշրջանի խնդիրներին համապատասխան և էլլա ամիսի է մասնաւում կյանքին: Այն ժամանակ, երբ իր սրբելի սրբին՝ երիտասարդ կոմպոզիտոր Ղազար Սարյանը ուղարկած ակատում զննքը ձևորին պաշտպանում էր Հայրենիքը, ժողովրդական նկարիչը, վրձինը ձևորին, թիկունցում շարունակում է ստեղծագործել նոր նկարներ՝ նրանց մեջ գովերգելով սովորական մարդու հերոսական ողին և Հայրենիքի գեղեցկությունը:

1942 թ. Սարյանը նկարիչների և Բ. Քոլուպյանի հետ նկարում է «Մոսկվայի պաշտպանության համար» մեծածավալ պահենուն, որունդ ցույց է տրվում Սովետական Բանակի անխորատակիերի պազմական ուժը: Այդ պահենուն զիտաղին պեճշնչում է անսատան Հավատուվ Հայրենական նկարում նկարիչների այդ նույն խումբը նկարում է նաև ռեզա-տարարները (1943), որը շնորհած նրա անսպարառության ու էռիքացին բնույթին, պատկերում է սովետական զորամասերի կողմից աղօտագրված մի բնակավայր և բնակիչների ուրախ հանդիպումը՝ սո-վետական զորամասերի հետ: Այդ շրջանում Սարյանը մեծ սիրով ու շնորհացամբ է նկարում ուղարկած կատարից վերագրած մարտիկների դիմա-նկարներ (մատիտ): Իր արվեստը ի սպաս զնելով Հայրենիքի պաշտ-պահեների հշմարիտ, կենդանի և արտահայտիչ կերպարների ստեղծման գործին:

Հայրենական ՄԵծ պատերազմի տարիներին Սարյանի ստեղծագոր-ծությունները հարստանում են նոր թեմայով՝ զինվորական դիմանկարնե-րով: Բացի նաև աշխատայինների մասինանկար զիմանկարներից, Սարյանը նկարում է նաև Սովետական Բանակի զններաբների ու սպաների, ինչպես նաև Սովետական Միության հերոսների զիմանկարներ: Պրանցից տառնձնապես հատկանշական է առզմա-ժումարին նաև միաց



*Portrait of Major General, 1947*

Խ. Ասակովի դիմանելարք (1943): Այստեղ Սարյանը ցույց է տալիս զինվորական մարդու կերպարը նրա գործունեության կարևոր պահճին՝ աշխատանքի ժամանակ: Ազմիրալը նստած սեղանի մոտ, խորասուզված իրեն զրագեցնող մտքերի մեջ, գրում է: Նկարիչը դիմուղի ամբողջ ուշագրաւթյունն ուղղում է նրա հանգիստ, կենտրոնացած արտահայտությամբ դիմքին: Այստեղ որված է սովորական զինվորական ստեղծագործ մարդու կերպարը: Հումանիզմը, որով համակված է աղմբիրալ Խոակովի դիմանելարք, ավելի ցայտուն է դրանորվում Սովորական Միության մարդարք: Բաղրամյանի դիմանելարք (1947): Սարյանի զինվորական դիմանելարին այդ հատկությունը կազմում է սովորական զինվորական դիմանելարշության հատկանշական գծերից մեջը, որն արժատավորված է հենց սովորական հասարակության խաղաղ բնույթի մեջ:

Բանակի գններալ, այժմ՝ Սովորական Միության մարշալ, Խ. Բաղրամյանը պատկերված է ձգուտի բազմոցի մեջ նստած, պատշգամբում, այգու մոտ: Նկարիչը պատկերել է նրան ամբողջ ֆիգուրայով, առանց պարմանական դիրքի՝ պարզ, քնական, հենց այնպիս, ինչպիս կարող էր նա նստած լինել իր տան պատշգամբում՝ նկարչի հետ ունեցած հանդիպման ու առօրյա զրույցի պահճին: Դիմանելարք զուրկ է առնականությունից ու հանդիսավորությունից: Չեն ընդդժված նաև բանակի գններալի պաշտոնական տարբերանշանները: Բայց այդ պարզության մեջ որքան խորություն և իմաստ է դրել նկարիչը: Բաղրամյանը ուշացիր, մեղմ և բարեւստորեն նայում է զինմացը՝ զիտողին: Նրա հայացքը նկարիչը տվել է այնպիսի նրբությամբ, որ անմիջապես զրայում է զիտողին և ստիպում նրան կանգնել նկարի տուն և երկար ու հետաքրքրությամբ դիտել: Դիտելով այդ դիմանելարք զգում ես խաղաղ, հանգիստ, առաջին հայացքից հասարակ թվասող այդ մարդու ինքնավատահությունն ու ննիքին մեծ ուժը և նրա բարոյական մարդությունը: Հավատամ ես, որ նա սիրում է խաղաղ, սովորագործ աշխատանքը և հենց զրա համար էլ նա իր ուժերը տվել է մեր Հայրենիքը ներխուժած ֆաշիզմի հրոսակախմբերի գնմ մշշող պայքարին: Հենց այդ էլ մոտ ու հարազատ է դարձնում նրա դիմանելարը սովորական բազմացուն: Բաղրամյանի զինմանելարը Սարյանը նկարել է ամրողշապիս լուսավոր զույներով: Նրա ֆիգուրան, դեմքը և շրջապատի առարկաները նկարիչը ողողել է արևաշին պայքառ լույսով: Դիմանելարի երկրորդ պլանում նկարված այդու կանաչ-զեղնավուն ծառերի ֆոնի վրա արևային



Հայելիքան Մայիսաւոյանից, 1942

հառագայթների լուսավոր արտացոլումները թաղրամյանի ֆիզուրան կապում են օգային միջամայրի հետ։ Դիմանկարի հարուստ և լուսավոր գունային գուման ուժեղացնում է նրա հիմնական գաղափարը։

Այդ շրջանում Սարյանը նկարում է նաև Հայ կուլտուրայի անվանի գործիչների դիմանկարներ, որոնք կարևոր նշանակություն ունեն՝ որպես Շողերանական բնութագրություններ։ Կերպարների ճշմարտացիությունը, Հոգերանական թագիանցիկությունը, ախպականը վեր հանելու և համոզիչ կերպով զիտողին մատուցելու նկարչի անվիճելի կարողությունը նրա արվեստը գարձնում են ներգործող միծ ուժ։

Հայրենական պատերազմի շրջանի ամենահաջող դիմանկարներից մեկը Սարյանի «Ինքնանկարն» է (1942)։ Այստեղ նկարիչը պատկերել է իրեն ստեղծագործական աշխատանքի ժամին՝ նկարելիս։ Նա մի ձեռքով վրձինը բարձր պահած, մյուս ձեռքում՝ պալիտրան նայում է ուղիղ դի-

տուղինու նրա լուրջ դեմքի, սուր ու թափանցող հայացքի մեջ նկարիչն արտահայտում է արվեստագիտ-քաղաքացու խոր հուզմունքը և վճռակա-նությունը պատերազմի ժամանակ երկրի ու ժողովրդի առջև ծառացած մեծ խնդիրների կատարման համար: Այդ «Ինքնանկարը» ստիլում է դիտողին ոչ միայն գիտակցել վասնպի լրջությունը, այլև ներշնչում է նրան կազմակերպվածություն և հաստատ հավաստ հազմանակի նկատ-մամբ: Պա մի դիմանկար-պատկեր է, որի պարզ, բովանդակալից կոմ-պոզիցիան, դիմագծերի պլաստիկ լուծումը և միանգամայն ճշշտ գծա-նկարը նպաստում են հիմնական մտահոգացման լրիվ բացահայտմանը: Այդ դիմանկարը, որով Մարյանն արգեն զնուական շրջադարձ է կատա-րում դեպի սոցիալիստական ուսմայքը, ունի ներգործող խոշոր ուժ:

Ակադեմիկոս Հ. Թրբելու դիմանկարում (1943) նկարիչը ստեղծել է դիտնական և խոհուն մարդու կերպարը: Անդ պատերազմի տարիներին Հայքինիքի ու ժողովրդի բախտը խորապես հուզել և կլանել է նաև արդ մեծ գիտնական-պատմաբանին: Նա գլուխը առաջ թերած՝ մի կետի հա-ռած հայացքով խորասուզված է մարերի մեջ: Այսուղ տրված է ներքին մեծ ուժով լցուած սովորական գիտնականի համոզիչ կերպարը: Հետա-քրքրական են նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիությի ան-դամներ Ս. Մալխատյանցի և Հր. Անապյանի, կոմպոզիտոր Ա. Խաչա-տրյանի, վաստակվոր ուսուցիչ Ս. Մահակյանի դիմանկարները:

Հայքինական Մեծ պատերազմում սովորական ժողովրդի նվազաւծ պատմական մեծ հայթանակի հետ կոռպված իր ուժախությունը և տանում բերկրանքը Մարյանն արտահայտում է նաև պեյզաժային նկար-շութքան մեջ: Նրա պեյզաժային նկարներում զգացվում է անօսովոր թար-մություն: Նկարիչն իր պեյզաժներում զառնում է ավելի մտախառն ու պրեստիլ: Այդպիսին է, օրինակ, «Արարատը գարնանը» (1945): Գարնա-նային հաստակ, թափանցիկ, օգային լայն տարածության մեջ որոշակի գծված են Արարատի ձևանապատ գարգալները: Արարատյան գաշտում ընությունն ակնել է վերակենդանանելու: Դուրս է նկել առաջին թարմ կտ-նեաշը, ծառերը ծաղկել են, խել մարդիկ բաներով բանդում, փափկացնում են հողը: Ամբողջ պեյզաժի հիմնական գումարյին գամման կազմում է ծաղկած ծառերի բաց վարդագույնը: Պա արդեն զիտողի մեջ առաջացնում է սպահմիստական արածմադրություն: Այդպիսի շերժ, որտեղ, լուսավոր տրամադրությամբ են հագեցված «Պայծառ ծաղիկներ» (1942) և հաւեկա-



Alpinemontane Vegetation, 1943



S. D. A. M. P. R. & T. L. P. 1931

այս ունիերները ռազմականակատից վերադարձողներին» (1945) մէծածավալ  
նաև յուրմորուները:

Հետպատճերագլուխ շրջանում ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը  
ապրում է ստեղծագործական մեծ վերելքի շրջան: Երկրի անցնելը խա-  
ղաղ ստեղծագործական աշխատանքի և գրականության ու արվեստի  
հարցերի մասին Սովորական Միության կոմունիստական պարտիայի  
կենտրոնի պատմական որոշումները նոր խնդիրներ են դուռը արվեստի  
աշխատառների առջև: Այդ խնդիրների լուծումը հակաբարձրական նշանակու-  
թյան է ունենում նրա գեղարվեստական հասկացողությունների հետագա  
վերակառուցման գործում: Սարյանը զգալիորեն հեռանում է դեկորատի-  
վիզմից և ստեղծում բազմաթիվ նոր պեյզաժներ, զիմաններներ ու նա-  
պատրմորուներ՝ խորացնելով իր ստեղծագործությունների գաղափարական  
բովանդակությունը:

Սարյանի ստեղծագործություններում գերակշիռ տեղ է դրավում  
հայրենի բնության թեման՝ Հայաստանի լեռնաշխարհի, կոլտըն-  
տեսային դաշտերի, բաղարային ու ինդուստրիալ պեյզաժը: Իր պեյ-  
զամային ստեղծագործություններում նկարիչն ավելի է մոռանում կյան-  
քին: Նրա պեյզամային նկարները հարստանում են կոլտնահային կո-  
լեկտիվ աշխատանքի, շինարարական ու արդյունաբերական մոռայլուն-  
ությունը, ժամանակին նոր տեսարաններում: Նույնիսկ կոլտնահային աշխա-  
տանքը պատկերող այնպիսի բազմաթիվուր-թեմատիկ նկարներում, ինչ-  
պիսին են՝ «Բամբակեանավարը Արարատյան դաշտում», «Սատարինի ան-  
վան կոլտնահանությունում», «Բամբակեանավարը Միացյան պրոլետարիատի մայն

բնության տեսարանները գրավում են վերակշիռ տեղ: Պատկերելով առ-  
գետական մարդկանց շրջապատող գեղեցիկ բնությունը և աշխատանքի  
միջավայրը՝ նկարիչը զրանուզ խմել ձգուում է պեյզաժը՝ դարձնել կոլեկ-  
տիվ աշխատանքի գեղարվեստական կերպարի ստեղծման ակտիվ միջոց:

Այդ պեյզամային և թեմատիկ պատկերներում որոշակի դրսենորդում

է պեյզաժիստ Սարյանի նոր կերպարը: «Պեյզաժի կազմակերպման ձգուումը, որը զգադի էր առանձնապիս նրա վաղ շրջանի մի բանի ստեղ-  
ծագործություններում, այժմ իր անզը զիջում է իրականության և ժամա-  
նակակից կյանքի սուր զգացմանը: Կոմպոզիցիոն ձևերը զառնում են  
հարուստ, գծանկարը ավելի կատարյալ:



Հովհաննես Օբրելի, 1943

Պեյզաժիստ Սարյանի համար՝ հատկանշական է իրականության կենսագործությանը, գունագեղը բնիւթավումը։ Առաջին հայացքից փոքրիկ, աննշան բիւզող բնության մի հատվածը «Մազկած ծառեր» նկարում (1947), որտեղ պատկերված է սոսկ մի բակ 4—5 ծաղկած ծառերով, Սարյանը ներկայացնում է որպես գունագեղ բնության բնդ՛անբացված կերպար, որպես ծաղկող Հայաստանի կենսուրախ արտահայտություն։ Պեյզաժի կենսահաստատ հատկությունը ուժիգացվում է գունային գամմայի հընդունակությունում։

Այս շրջանում Սարգսինը հնագույն հնագույն է բնության էտիվա-  
դային պատկերությոց և հանդիսական է բնության ուժեղ ձգտությունը հայկական  
քնության ընդհանրացված կերպարի ստեղծման նկատմամբ։ Նրա մի  
շաբաթ պերգամետին ստեղծմացործություններում, ինչպիսին նև՝ «Հնագույն  
Արտադիր բարձունքներից», «Թումանյան պյուղի լուսներում», «Ենորու-  
թառի ձորը» և այլն, իր հայտատությունը է գոնում պերգամ-ությունի բարձր  
«Կեսօրու նկարում (1953) Սարգսինը պատկերություններում, ինչպատճեն հրաշա-  
զեղ անսարաններից մեջ՝ Արարատյան գաշտը և Արարատը՝ հայտակո-  
րեն գծված պարզ ու կապույտ երկնքի ֆոնի վրա։ Առաջին պատճենը պատճեն,  
դաշտային ծաղիկների ու կանաչի մեջ նկարված է Հանեղարտ Շուող մի  
դիտակի Արարատյան Հովիտը և Արարատը նկարված են խոր ոհարիստո-  
ւնն, իրենց տիգարկան գծերով։ Արևաշինի կիվիչ ճառագայթները, որոնցով  
ոզուզած է ամբողջ նկարը, թափանցել են ողի, կանաչի, ծաղիկների, չըլ-  
և շրջապատի ամրաժության մեջ՝ նրանց բնական գույներին տալով պայ-  
ծառություն, հնչեղություն ու շերտություն։

Իրականության գույնային հարատությունը նկարիչը ովել է մեծ  
զգացմունքով։ Գույնների երանդների նուրբ փոխարքերությունը ուժե-  
ղացնում է Արարատյան դաշտի կեսօրվա պատկերի և արևաշին տաք  
սրբա վերաբարպատեան համոզիչ լինելը։ Նկարիչն այստեղ շնորհակա-  
լուքում միայն Արարատյան դաշտում եղած գիտակի ու Արարատ լե-  
ռան պատկերով։ Պուռանեկարգական բարձր վարպետությամբ խորապես  
բացահայտելով պերգամետի պայմանին կերպարը՝ նա հասնում է առավել  
նշանակալիք նպատակի, առնդենուզ արևաշին և ծագկող Հայուսութեանի  
ընդհանրացված կերպար։ Կյանքի հանդիսավոր ուրախությունը կազմում  
է այդ նկարի հիմնական գույնագույնական բռվանդակությունը։

Գելզեմային առնդեպագործություններում Սարգսինը միշտ է արարա-  
տյանում է իր վերաբերմունքը իրականության նկատմամբ։ Հայրենիքի  
հանգեց նրա տաճած անշուն անըլ գիտողին համակռում է կենսահամապատ-  
շավուն սությամբ։ Նրա մեջ արթնացնում հայրենասիրուեան շերտ  
զգացմունքներ, մեր կյանքի ուրախությունը, սոցիալիզմի երկրի քաղա-  
քացու բարձր արժանապատվությունը։ Հենց զա է մեծ զարպեաի պերգա-  
մետին առնդեպագործությունների հասարակական-բարդարական ու դնդար-  
պես սառական նշանակությունը։

Իր նոր զիմանկարներում Սարգսին ստեղծում է ոնսպուրինկայի

Double sample






Արտբուտը Միջնական գյուղեց, 1949

չափագույն մարգելանց մի շարք կերպարներ։ Ուշադրավ են Ստալինյան մրցանակի չառընաւաներ՝ երիտասարդ կոմպոզիտորներ Ա. Հարությունյանի, Ա. Բարաչյանյանի, բանաստեղծուհի Ա. Կապուտիկյանի դիմունկարները։ Այդ դիմանկարների հիմքեր են կազմում սովորական մարդու նոր գորգացող և ամրապնդվող անհատական դժերը և նրա ստեղծագործական կերպարի բացահայտումը։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Հայոսաւանի և Էդրայրական սեսազուրյիկաների արձնատի ու կուլտուրայի նշանավոր դրսիշների ավագ սերնդի ներկայացուցիչների կերպարները։ Ամո Խարազյանի դիմանկարություն (1954) նկարիցը պատկերել է իր ողջ ստեղծագործական մեծ կյանքը ժողովրդին նվիրած բակական ժաղավագործական արտիստի կերպարը։ Հիմնալի սուր դիմունկանությամբ նաև նկարն է բար-



Մհեմն իր կնառություն, 1949

մասմասուակ արտախտի ախտական զիմագծերը, նրա աշքերի խոր թափանցազ, խելացի ու ծանրախոն հայացքը՝ վերաբառապելով մարդկային անհատականություն Հոգմոր մեծ ուժով՝ Աւերտինական ԱՍԲ նկարչունի, Առավինդան մրցանակի լատրեատ Տ. Յարլոնսկայայի զիմանկարը (1954) ուշի է ընկեռում իր թարմությամբ և Սարյանին հատուկ գեղարվեստական արտահայտչական միջոցների կիրառման համարձակությամբ: Միանգումայն Հաջող և զիպուկ ձեկրությունու կեցվածքի ու շարժման՝ նրա համար առավել հատկանշական, թեն անցողիկ, պահը և նրա ոգեշնչված զիմքի ախտական արտահայտությունը, նկարիցը կապվի վրա վերաբառապրել է կյանքի նկառմամբ՝ ակտիվ վերաբերմունքով էցուն, խանդավառ առնգծագործող սովորական արվեստագիտունու կենդանի ու արտահայտի կիրառը: Նկարչունի Տ. Յարլոնսկայայի զի-

մանկարը միաժամանակ ներկայացնում է մեր ժամանակի առաջավոր կնոջ ընդհանրական համոզիչ տիպար:

Այս շրջանում Սարգանը մեծ ուշագրաւթյուն է դարձնում նաև ռեսպուբլիկայի արդյունաբերության և կոլտնառնային դաշտերի առաջավոր ների դիմանկարներ ստեղծելու վրա: Այստեղ արդեն անանում էնք սովորական աշխատավոր մարդու կերպարներ՝ առօրքա ստեղծագործ աշխատանքի իրենց ձգտումներով ու բնափրությամբ: Կերպարկանի քիմիական գործարանի առաջավոր բրիգադիր Մ. Թագեռոյանի դիմանկարում նկարիչը ստեղծում է սովորական բանվորի կենդանի կերպարը: Աշխատանքի մեջ կոփված բանվորի արտահայտիչ դեմքը նկարված է գործարանի ֆոնի վրա՝ ցույց տալով նրա ներքին մեծ ուժը և արժանապատճենվությունը:

Նկարչի դիմանկարներից անհրաժեշտ է նշել նույն նրա հանարկ զծանիկարները: Իր ամբողջ ստեղծագործական գործունեության ընթացքում նա կատարել է մի բանի հարցուրի համարող առաջնակարգ գծանկարներ, որոնք ներկայացնում են դիտության, գրականության և արվեստի տարրեր բնագավառների ներկայացուցիչների տիպեր ու կերպարներ, ինչպես նաև պեղպատճեր ու կենդանիների պատկերները Սարյանը զծանիկարի մեծ վարպետ է: Տիբրապետներով սուր գիտողականության և գծանկարի գիզարվեստական բարձր կուլտուրային՝ նկարիչը արագործելու որոշմ է գրուցակցի տիպական զիմագծերը և իր միջրուուղարկին զծանկարներում հիմնալիքներն վերարտագրում նրա կերպարը: Իրենց նրբությամբ Հատկանշական են ուժիքայր Տ. Շամիրիստանյանի, բանասեղծ Ավ. Բահակելյանի, պրոդ Դ. Քեմիրյանի դիմանկարները: Նրանց դեղուցիկ ու հստակ զծանկարները լիովին նպաստում են կերպարների բովանդակության բացառական լուծմանը:

Սարյանի հետապատճերագրան շրջանի ստեղծագործություններում կարենու առ է գրավում նաև նատյուրմորտը՝ բազմապահ մրգերի, ծաղիկների, բանջարեղինի պատկերները: Սարյանը բազմաթիվ նատյուրմորտներ է նկարել դեռևս նախասովենական շրջանում («Նկարական պիտակներ»—1911, «Պատուղներ»—1912, «Նատյուրմորտ կապույտ վազավույզ»—1915), ինչպես նաև 1920—1930-ական թվականներին («Նատյուրմորտ»—1925, «Մրգեր և երեխաներ»—1928, «Շաղիկներ»—1929, «Պըտուղներ և բանջարեղին»—1933, «Ենոնոյին կականներ»—1935, «Մաղիկներ այբու անկյունում»—1940 և այլն): Այդ աշխատն կոչված «անկեն-




Բանագիրական կույտը Արքայի հասյան, 1948



Նատյուրմորտ. 1933

բան ընության» պատկերներում նկարիչը սրոշակի արտահայտել է իր ակարիվ վերաբերմունքը իրականության նկատմամբ:

Մարդանի հետաքանիքազմյան շրջանի բազմաթիվ և լավագույն նաւայուրմուտների հիմնական գաղափարական բովանդակությունը կազմում է հայրենի երկրի առատության և գեղեցկության գաղափարը՝ նկարիչն աշխատում է մեր կյանքի նյութական և Հոգևոր առատությունը, կորունակացին բերքի հարստությունն արտահայտել նաև նատյուրմուրաների միջացով։ Նրա նատյուրմուրաների միանգամայն ինքնատիպ կոմպոզիցիաները, հարուստ գունային գամման և բազմազան առարկաների ցայտուն ընութադրումը նպաստում են հիմնական գաղափարի լրիվ բացահայտմանը։ Մարդանի նատյուրմուրաների կոմպոզիցիաների առանձնահատկությունը նրանց պարզությունն է։ Նկարիչն ընդհանրապես խուսափում է մրգերն իրարմատակած կամ վազաների մեջ բուրգածե դասավորումներից, ինչ-



Բայրութի Արևմտյան ափակ գոտի, 1949




111  
1911  
Still life with flowers and fruit



Ռուբեն Թոմասյան, Նույտյան բժոքը, 1954

պիսու սրբազնոցին կերպով նեկարուում են շատ նեկարիչները։ Սարբանի Համար համականշական է մրգերի բազմազան տեսապեսների և առարկաների սղասա զասավորությը հարթության վրա (օրինակ, «Մըղեգիր և բանջարեղբաններ» 1942)։ Առարկաների այգօրինակ դասավորությունը Հնարավորությունն է տալիքու նեկարիչն վերաբատրելու բուրաբանվուր առարկա իր ամբողջ նշանակությամբ և զունային հարստությամբ։ Այդպիսին են, օրինակ, «Երեսնի աշխանացին նատյուրմորտ» (1944) և մանավանդ շերմու կինոսուրան կողարիտ ունեցող «Ռակն աշունը միծածավուլ նեկարը» (1954)։ Այդ նատյուրմորտների ձևավորող մյուս տարրերն են նաև զույնը և լույսը։ Ուշագրավ է, որ ընտրված բոլոր առարկաները զունանկարչական տեսակետից միևնույն չափով շնորհանդիսական նեկարչներ։ Սարբանը



Henry, 1848

Էրբեմն ընդգծում է մեկը, ընդհանրացրած թազնելով՝ մյուս առարկան՝ Հիմնականը գիտողին ավելի ցայտուն գարձնելու համար Կիբառելով՝ երբեմն հակագիր տարբեր գույքներն իրար հետ, ինչպես օրինակ՝ վառ կարմիրը կանաչի հետ, կապույտը՝ զեղինի՝ իրենց ամրոցը բազմերանգությամբ, եկարիչը համեռում է առարկաների զանացին ճշշտ, ցայտուն բնութագրման և հեղինակության: Առարկաների վերաբառագրման գեղարվեատական բարձր վարդը վարպետությունը տալիս է նրանց մեծ արտահայտչականություն: Այսուղի կարևոր նշանակությունը ունի նաև լույսը, որը Սարցանի նույտուրմության երրում ուղղում է ամեն մի առարկա, թափանցում ամեն մի անկյուն՝ լուսնոյ և պարմատ գարձնելով ամրոցը պատկերու:

Սարցանը սիրում է նկարել զաշտացին բազմատեսք ծաղվելելու և վարդեր: Նրա կազմած դաշտացին փարթասով ծաղվելելորի պատկերներն իրենց մեջ կրում են Հայուսանների բնության գեղեցկության գորգափարը («Աշտարակի մայիսին ժաղիկները»—1947, «Վարդեր»—1949, «Պայծառ ժաղիկներ»—1953): Այդ գնդեցիկ ծաղկի վնչելորի պատկերներում զիմուղին հրապարակ են նրանց թարմությունը, բնության գույքների հարուստ բազմազանությունը իրենց ամրոցը Համարով: Նկարիչն իր զանանկարչական բարձր վարպետությամբ ստեղծում է զանանզ նրանգների ինքանան սիմֆոնիա և հիմացած գովերդելով՝ հայրենին իրենքունք հարության ստեղծած հրաշալիքները՝ հիացնում է նաև դիտողին:

Սարցանի ստեղծագործություններում նաև լուրջուրմուց երբեմն երեսն է գալիս նաև թեմատիկ-կոմպոզիցիոն պատկերներում («Բերանաւագար»—1940) կամ կոմպոզիցիոն դիմանկարներում («Էնոշ գիմնանկար»—1941 և ուրիշները): Այս կարգի աշխատանքներում նաև բարձր մարդու ինքնանդատառությունը չէ, այլ կազմում է սրբութիւն անբաժանելի մասը և գեկորատիվ մշտակ տարբերի (վառ գույքներով կտորնեղիների, վարագույրի, ափահների, ամանեղիների): Հետ հարստացնում և ավելի բավանդական գույքը են գարձնում պատկերը:

Մարտիրոս Սարցանի գեղարվեատական գործունեանթյունը չի սահմանափակվում միայն ստեղծագործական աշխատանքով: Նա Հայուսաններ սովորական նկարիչների միության կողեկատիվի հասարակական-զնակարգեատական կյանքի ակտիվի մասնակիցն է: Սրկար տարբերեն նա հզել է այդ Միության նախագամունք և ՍՍԻՄ նկարիչների միության կազմկերպեատեն անդամ: Նա, միաժմանակակ, զգուի աշխատանքը է կառարում ռես-



Suzanne Gumprecht, 1934

սպուրզինկայում նեկարիչների ազգացին կազմենք պատրաստենքու. թնագավավառում: Որպես նեկարշության պրոֆեսոր նա նըրեանի Գեղարվելմատական ինստիտուտում՝ ոչ միայն իր դեկանագարությամբ, այլև խորհուրդներով, շատիս զանց սիրապիր ու Հոգածարը վերաբերմունքով սղեւում է երիտասարդ նեկարիչներին՝ արագործներ աճելու և նեկարշության պրոֆեսուալար բարձր կուլտուրային արդարագեալու: Համար: 1947 թ. նա ընտրված է ՍՍՌՄ Գեղարվելմատակարի Ակադեմիայի իսկական անդամ:

1949—1951 թթ. ակադեմիկոս Մարգարեր զինագործություն է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արքեստաների պատության ու անսության անկատորը՝ ամեն կերպ նույսատեխնոլոգիական արվեստագիտական մտքի գարգացմանը և Հայկական կերպարվեստի, ճարտարապետության, նրաժշտության և թատրոնի պատության ու տնօնության բնագավառների համար արդինատագիտական նոր կազմերի պատրաստմանը: 1950 թ. Մարյանի ծննդյան 70-ամյակի առթիվ, բարձր զնաշատերով նրա ժառայությունները սովորական արվեստի գարգացման գործում, ՍՍՌՄ Գերագույն Սովորոց նրան պարզաբանություն է կուռսավարական նոր ու բարձր պատգենով Հենինի երկրորդ շքանշանով (Հենինի սուսացին շքանշանը Մ. Մարգար աստացել է 1945 թ. Սովետական Հայաստանի 25-ամյակի առթիվ):

Նեկարշի կյանքում կարենու տեղ է գրավում նաև նրա Հայաստական-պետական գործունեությունը: 1954 թ. մարտի 14-ին Մարտիրոս Մարգարենը նրարդ անզամ ընտրվում է ՍՍՌՄ Գերագույն Սովորության պատուական՝ Միության Սովորություն: Որպես խաղաղության համար մզվազ պայքարի առուշավոր մարտիր, նա ոչ միայն իր ստեղծագործություններով, այլև Հայաստականին հեռության ու Հոգածածներով և Հոգածածներով է գալիք խոսդապետության օգտին՝ ընթցիմ պատերազմի հրձիգների: Մարտիրոս Մարգարենի Հայաստական-պետական գործունեությունը սիրտորեն կապահած է նրա զեղարվեստական գործունեության հետ և կազմում է զրու անբաժանելի մասը:

Չնայած պատկառելի տարիքին՝ 75-ամյա նեկարիչը լի է ստեղծագործական անսպառ եռաւղղություն: Նա երիտասարդական խանգամավառությամբ ու Հոգածածներական հոկայական ուժով շարունակում է անխոնչ իշտառքի իր ստեղծագործական, Հայաստական-պետական աշխատ-



90-347-2 1972

աւանքները՝ մարդուակորենով իր մեջ ստովառական նկարիչ - բարձրացնուն  
շավագույն օրինակը:

\* \* \*

Այսպիսով, ինչպես անմուռով ենք, ժողովրդական նկարիչ՝ Մարտիրոս Մարյանը խոշոր տեղ է զբաղվում Սովորական Հայաստանի կերպարվեստի պատմության մեջ: Հանդին զալով զննում նախաստվետնկան շրջանում, հետագայում նա իր մաթանակարից լուսակույժ հայ նկարիչներին հետ սկզբնավորում է Սովորական Հայաստանի կերպարվետը և իր ինքնատիպ, բարձրորգվեան ստեղծագործություններով նշանակալից շտափով հարստացնում և առաջ է մզում սովորակաց նկարչությունը, բարձրացնելով այն մի նոր, ամենի բարձր տարրինանի:

Մարտիրոս Մարյանը հայրենի քնության և մարդկանց հոգեսր պետքեալության խանդավառ երգին է նկարչության մեջ:

Սոցիալիստական ոճայինքի առաջավոր ստեղծագործ ստեղծագործական մեթոդի կերտավանք նրա լուսագույն ստեղծագործությունները հարստացնում են մարդու հոգեկան աշխարհը և խոշոր դիրք ինքնատիպ բարձր գնահատող աշխատավորական լայն մասսաների զննության առարկանության գործում:

Հայկական ՍՄՌ ժողովրդական նկարիչ, Ստալինյան մրցանակների յառաջնայտ Մարտիրոս Մարյանի ձևով ազգային, բովանդակությունը սոցիալիստական արդյունաբար ներդրում է Սովորական Միության կենցության պատմության մեջ:

## ՀՈՒՅԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ազերաւանցը Մյասնիկյան, տժիսանկար, 1909
2. Արմավենիք, կոտոր, տեմպերա, 1911
3. Պարկեղին Հեռնյան, կոտոր, տեմպերա, 1912
4. Ազերաւանցը Մատուբյան, կոտոր, տեմպերա, 1915
5. Հարաստան, կոտոր, յուղանկար, 1923
6. Իմ բակը, յուղանկար, 1923
7. Եղիշե Ջարենց, յուղանկար, 1923
8. Հոգին, թալամոնյանի և Հին օրնեաթյանը՝ բանեանեղամբյանից, յուղանկար, 1923
9. Արմեն Խոկանյան, մատիտանկար, 1924
10. Վահրամ Փափառյան, մատիտանկար, 1924
11. Միքայել Մանվելյան, մատիտանկար, 1924
12. Համբիկ, մատիտանկար և տաշ, 1924
13. Բամանսէ Մելքըրյան, մատիտանկար, 1924
14. Ասքանազ Մոռոջյան, մատիտանկար, 1925
15. Նորյանը մարտ կնոք պատկերով, յուղանկար, 1927
16. Գորոնք, յուղանկար, 1929
17. Նատյուրմորտ, յուղանկար, 1933
18. Ազերաւանցը Թամանյան, յուղանկար, 1934
19. Թորոս Թորոմանյան, յուղանկար, 1934
20. Արագերցի, յուղանկար, 1935
21. Թուրքն Միմոնի, յուղանկար, 1939
22. Ալ. Սպենդիարյանի «Ազմառա» ոպերայի բեմադրության տառչնն զարթագուա-  
թյան տեսարանի ձեռքբարումը (Էսքիզ), 1939<sup>ն</sup>
23. Ալ. Սպենդիարյանի «Ազմառա» ոպերայի բեմադրության երկեւորդ զործողու-  
թյան տեսարանի ձեռքբարումը (Էսքիզ), 1939
24. Ավետիք Բանակյան, յուղանկար, 1940
25. Համբիկ Ջարյան, յուղանկար, 1940
26. Գևոստանցին Մարտիրյան, յուղանկար, 1940
27. Հայկական Պանիկերյան, յուղանկար, 1940
28. Ծերբաւանցը, յուղանկար, 1940

29. Բնելուսնկար, յուղանկար, 1942 (գունավոր)  
 30. Առեփան Մալխասյանց, յուղանկար, 1942  
 31. Հոգսկի Օքրելի, յուղանկար, 1943  
 32. Ազմիքազ Բ. Բանելով, յուղանկար, 1943  
 33. Երևանյան աշխանային նաևյարժմարտ, յուղանկար, 1944 (գունավոր)  
 34. Արարատ Գարենինը, յուղանկար, 1945  
 35. Իվան Բաբրամբան, յուղանկար, 1947  
 36. Սակինձ Ճաներ, յուղանկար, 1947  
 37. Բանվար-ըրբկազիք Մ. Թաղեասյան, յուղանկար, 1948  
 38. Արարատը Միջյան պյուղից, յուղանկար, 1949  
 39. Բամբականավարը Արարատյան գաշտում, յուղանկար, 1949  
 40. Ահանք Քրիկումուտին, յուղանկար, 1949  
 41. Տիկոր Արագածի բարձանքներից, յուղանկար, 1950 (գունավոր)  
 42. Կեսօր, յուղանկար, 1953  
 43. Քառնիր Հորբ, յուղանկար, 1953  
 44. Տառյանա Յարդունակյան, յուղանկար, 1954  
 45. Ասկէ աշուն, յուղանկար, 1954



Դադար, Պոլքացը և անվանմթերթեր  
Նկարիչ և ՏԻՊՈՏԻՊՑԱՆԻ

Պատ. խմբագիր Խ. ԵՍԱՅԱԿԱՆ  
Հրատ. խմբագիր Հ. ԷԼՇԻՐԵԳԱՆ

| Տեխ. խմբագիր Խ. ԿԱՓԱԱՆՑԱՆ   | Կոնկորդ սրբագրիչ Խ. ՇԱԿԱԼԱԲԱՆ |
|---|-------------------------------|
| ԽՀԱ Ա 263   | Հրատ. 1147                    |
| Գիրք 4 ս. 40 կ.   | Վ. Տ. 10662                   |
| Հանձնված է արտագրաբան 27/III 1955 թ., ստորագրված է ապագրության<br>6/V 1955 թ., պատվիր 228, սիրու 3000. Հրատ. 4 մասնութ, սով. 3<br>մասնութ + 3 նկարիչ, թղթի շափը 60×92 <sup>1/16</sup> . |                               |
| Հայկական ԱՍԹ ԳԱ Հրատարակության տպարան, Երևան, Աբովյան, 124:   |                               |

75



75



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007429

A II  
19980